



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԱԹՍՈՒՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ

30 ԿԱՐՏ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԼԷՆՏԻՍԵԱՆ

— 1873 —

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆՈՍ ԿԱ  
30 ՄԱՐՏ 1873

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Թ. ՏԱՏԵԱՆ ԷՅԷՆՏԻ (Բ. ԱՏԵՆԱՊԵՏ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Վաւերացում նախընդաց նստերու ատենագրութեանց
2. Որոշում Աղթամարայ Կաթուղի կոսական խնդրոյն
3. Ատենական Կանոնագրութիւն:

Ատենայն բացուեցաւ ժամը 8 ին, 'ի ներկայութեան 53 Երեսփոխանաց մեծամասնութեան ժողովոյ, եւ հետզհետէ եկող Երեսփոխաններով ներկայութեան վերջին թիւը 63 ի հասաւ:

Դիւանն անմիջապէս մէկ քանի նամակներ ներկայացուց, յորոց մին Իստիմարանեան Գէորգ էֆէնտի գրած էր, եւ կ'իմացնէր թէ առժամանակեայ ճամբորդութեան աղազաւ չպիտի կարենայ այսօր ներկայ գտնուիլ ժողովին:

Իսկ նորրոնոր Երեսփոխաններէն Մակարեան Յակոբ եւ Քիւսիւրզեան Սեպուհ էֆէնտիներն ալ հրաժարական գրած էին: Այս երկու հրաժարականներէն զատ, Դիւանը յայտարարեց նաեւ թէ ներկայութեան տուժարին համեմատ ներսէսեան Գրիգոր եւ Մելիքեան Եղիազար էֆէնտիներն ալ Դ. բացակայութիւն ունեցած ըլլալով ըստ օրինի հրաժարեալ կը համարուին:

Արտւանեան Ս. Փաշայ — Եթէ ժողովը կը ներէ քանի մը խօսք ունիմ այն որոշման վրայ, որոյ համեմատ երեք անգամ շարունակ բացա-

կայ գտնուող Երեսփոխանք հրաժարեալ կը համարուին: Մեր ազգին մէջ Երեսփոխանները ժողովրդէն կընտրուին, պէտք էր որ ժողովուրդը ոչ միայն իր ընտրելիք անձը ճանչնայ, այլ եւ սկզբունքը գիտնայ, բայց ժողովուրդը դեռ անկատար է Սահմանադրական ընտրութեանց մէջ, զեռ իւր կրթութիւնը կատարելագործուած չէ: Ուստի առաւել իւր համարման կամոր եւ է նրկատողութեան համեմատ քան թէ սկզբունքով կ'ընէ իւր ընտրութիւնները. ըսել է թէ օրինաւոր կերպով կարող չէ ընտրել: Միւս կողմէ Պօլսոյ վիճակն ալ գիտենք, յարաբերութեանց մասին դժուարութիւններ պակաս չեն, եւ այդ դժուարութեանց պատճառաւ թերեւս Երեսփոխան մը չկրնայ իրարու վրայ քանի մը անգամ ներկայ գտնուիլ Ընդհ. ժողովոյ նստերուն: Ասանկ պարագայի մը համար ժողովը որոշեր է հրաժարեցնել նոյն Երեսփոխանը կամ աւելի պարզն ըսելով ժողովրդին ընտրածն եւ դարձնել. այս բանը եւ ոչ մէկ ազգի մը մէջ կայ, Սահմանադրութեան մէջ ալ չկայ, եւ անակաւին

18 414  
ԱՅՏԵՆԱՊԵՏ  
80 ԲՈՂՈՎ  
ՏՊԵՐ  
ՍՐԲԱԶԱՆ  
ՊԱՏՐԻԱՐԺ  
ՄԱՐՏ 30 1873



ԱՅՏԵՆԱՊԵՏ  
ՍՐԲԱԶԱՆ  
ՊԱՏՐԻԱՐԺ  
ՄԱՐՏ 30 1873

Սահմանադրութեան վերաքննութիւնն ընդունուած չլինելուն Ընդհ. ժողովն իրաւունք չունէր ասանկ որոշում մ'ընել կամ լաւ եւս հիմնական սկզբունքի մը վրայ պէտք էր ընել . ապի ժողովուրդը պատժել ըսել է , բայց այնպիսի պատիժ մը որ իւր անգիտութեանը համար կը կրէ . եթէ Անգղիոյ կամ Ամերիկայի ժողովրդոց պէս ըլլար մեր ժողովուրդը , անոնց նըման զիտակցութեամբ պիտի ընէր իր ընտրութիւնները . անոնք ընտրողաց եւ ընտրելեաց մէջ կապակցութիւններ ունին , որ մեք չունինք . իրենց ընտրելիները կանխաւ զիրենք բարձր կը ներկայացնեն , մինչդեռ մեք ընտրողական ժողովներ ունինք , բայց ընտրելիներն անգամ մը չենք կանչեր հարցնելու : Ընդհ. ժողովն այսպէս երեք անգամ բացակայ Սերափիմովան մը հրատարակելով ժողովրդին իրաւունքը ձեռքէն առած կ'ըլլայ , եւ վերաքննութիւնը չկատարուած այս տեսակ որոշումը ընելն աղէկ չէր . ուստի կ'առաջարկեմ որ եթէ հնար է այդ որոշումըն առ այժմ ետ առնուի մինչեւ ցվերաքննութիւն , եւ եթէ չընդունուի այս , գոնէ իմ զիտողութիւնս արձանագրուի :

Ս. Նախագահ . — Ուրիշ անտեղութիւններ ալ կան , որոնց վրայ չխօսեցաւ Ստեփան փաշայ . շատ երեսփոխաններ նորեկ եւ երախայ են , դեռ չգիտեն եւ նոր պիտի սորվին . թաղերէն շատ անգամ գանգատներ կը լսուին թէ մեր ընտրածը չընդունուիր , նորէն ընտրելու համար տարապարտ ծախքեր կ'ըլլան , եւ զէչն այն է որ 10—20 հոգիով երեսփոխան կ'ընտրեն . այս դրութեամբ արժանաւոր երեսփոխան չպիտի ունենանք . բոլոր այս անտեղութիւնք Ընդհանուր ժողովոյ այդ մէկ որոշումէն յառաջ եկան , ուստի ես ալ կը կրկնեմ Ստեփան փաշայի առաջարկութիւնը եւ կըսեմ թէ այդ որոշումը պէտք է ջնջուի :

Փափագեան Ս. էֆ . — Խնդրոց կարգին մէջ չկայ Ստեփան փաշային եւ Ս. Նախագահին յարուցած խնդիրը . եթէ պիտի խօսուի այս խնդրոյն վրայ , գիւտնոր պէտք է որ յստատարէ ժողովին եւ խնդրոց կարգն անցնէ . այնուհետեւ խօսք ունիմ Ստեփան փաշայի առաջարկութեան դէմ . նոյնպէս Ս. Նախագահին առաջարկութեանցը պիտի պատասխանեմ , եւ թերեւս կարող պիտի ըլլամ համոզել զիրենք :

Ատենապետ էֆ . — Ժողովոյն կամացը պիտի գիտեմ . եթէ խնդրոյն ստիպողականութիւնն որոշէ խնդրոց կարգը կանցնի , եւ այնուհետեւ կ'ընայ խօսուի :

Պէկեան Թ. էֆ . — Խնդիրն արդարեւ կարեւորութիւն ունի , ես ալ կզգամ դայն , բայց այսօրուան դործ չէ . ուստի կ'առաջարկեմ որ վերաքննութեան ատենին մնայ այս խնդիրը :

Փափագեան Ս. էֆ . — Ուրեմն առջի որոշումը պիտի մնայ տակաւին :

Շատ մը երեսփոխանք այս միջանկեալ խնդիրը թողուլ եւ խնդրոց կարգին անցնելու կ'առաջարկեն :

Փափագեան Ս. էֆ . — Ժողովն արդէն Սահմանադրութեան ինչ ինչ կէտերը սրբազրած է . Ընդհանուր ժողովը յօդուած մի յաւելցուց Սահմանադրութեան այն յօդուածին ուժով որ Քաղ. ժողովոյ համար կը տրամադրէ թէ երեք անգամ իրարու վրայ բացակայ գտնուող ժողովական մը հրատարակ կը համարուի . ըսել է թէ սկզբունքը Սահմանադրութեան մէջ ալ կայ :

Պէկեան Թ. էֆ . — Խնչ հարկ կայ հոս խօսիլ եթէ պիտի վերաքննուի . երբ վերաքննիչ յանձնաժողովն իր ծրագիրը բերէ , այն ատեն ժողովն կ'ընայ այդ կէտն ընդունելու կամ մերժելու :

Խօսակցարեան Օ. էֆ . — Երեք անգամ բացակայ երեսփոխանի մը հրատարականն ընդունելու կամ չընդունելու խնդիր կը յուղուի մինչդեռ խնդրոց կարգին մէջ չկայ այնպիսի խնդիր , եւ մեք պարտաւ ժամեր անցընելու համար եկած չենք . եթէ ասանկ անակնկալ խնդիր մը խնդրոց կարգն անցնէք , գուցէ վաղն ես ալ հրատարիմ , եթէ Ստեփան փաշայն առաջարկութիւն մ'ունի , կ'ընայ գրով ներկայացնել եւ ժողովին ուշադրութեանը յանձնել :

Արտաւանեան Ս. Փաշայ . — Իմ ըրածս զիտողութիւն մ'էր , զոր եթէ ժողովն ընդունիլ չուզէր , ես իրաւունք չունիմ անոր կամացը վրայ բռնանալու . միայն թէ ինչպէս արդէն ըսի , իմ զիտողութիւնս թող արձանագրուի :

Որոշում Ազգամարայ կաթուղիկոսական խնդրոյն :

Ատենապետ էֆ . տեսնելով որ ժողովը արամաղի չէ յարուցեալ խնդիրը յուզել , կը գոցէ զայն եւ կանցնի խնդրոց կարգին :

Ատենապետ էֆ . — Արդէն յայտնի է որ նախորդ նստին մէջ սոյն խնդրոյն վրայ վիճաբանութիւնը գոցուեցաւ , եւ եղած առաջարկութիւնները չորս կէտերու վերածուելով , քուէարկութիւնը մնաց այսօրուան նստին . ահաւասիկ նոյն առաջարկութիւնները :

Ս. Գատական Մասնաժողով մը կազմելու Բաշատուր եպիսկոպոսի խնդրոյն քննութեանը համար :

Ք. Զրաւիրիչ Բաշատուր եպիսկոպոսն . որ տե-

ղեկադիր մը բերէ Ընդհ. ժողովին ինքզինք արդարացնելու համար :

Ք. Ընդհ. ժողովոյ նախորդ որոշման համեմատ Համադումար ժողովոյ վերաքննութեան յանձնել :

Ք. Հիմակուրնէ խնդիրը յանձնել Արարատեան մայր աթոռին :

Հիմա այս չորս առաջարկութիւնները քուէի պիտի դրուին . բայց նոյն կը հարցնեմ ժողովին թէ քուէարկութիւնը յայտնի թէ ոչ գաղտնի պիտի ըլլայ :

Երեսփոխանաց մէկ մասը յայտնի եւ միւս մաս մ'ալ գաղտնի ըլլալը կը խնդրեն :

Մայրաքան Յ. էֆ . — Նախորդ նստին ներկայ չէի , որուն համար զաւ կը յայտնեմ . այնպէս լսուեցաւ թէ առաջարկութիւններէն մին ետ առնուեր է , այն է Համադումար ժողովոյն յանձնելու առաջարկութիւնը . կը հարցնեմ Յիւլանին թէ ստոյգ է այս :

Ատենապետ էֆ . — Ոչ , նախորդ նստին վիճաբանութիւնը գոցուեցաւ եւ եղած առաջարկութիւնները չորս կէտերու վրայ ամփոփուելով չորս պահ մ'առաջ մի առ մի ներկայացուցի , քուէի դրուելու համար այսօրուան թողուեցաւ . հիմա նորէն կը հարցնեմ , քուէարկութիւնը գաղտնի թէ յայտնի կուզէք :

Ոմանք կուզեն հասկնալ թէ չորս առաջարկութիւնք մէկէն ինչպէս քուէի պիտի դրուին :

Ատենապետ էֆ . — Չանտղան խնդրոց միատեղ քուէարկութիւնն ազգային օտար ժողովներու մէջ շատ անգամ երկար վիճաբանութեանց ենթակայ եղած է : Երբեմն քուէի դրուելիք կէտերն իրենց առաջնութեան կամ կարեւորութեանը համեմատ կարգի դրուած եւ այնպէս քուէարկութեանց մէջ առաջարկութիւնները մէկ թղթի վրայ գրուելով աւելի զխրութեան համար Երեսփոխանաց մէջ պարտուցեր են . որ իւրաքանչիւր Երեսփոխան զորն եւ ընդունի . անոր տակը նշանակէ . այսպէս ալ մեր մէջը կըրնայ ըլլալ թէ որ կամիք յայտնի քուէարկութիւն ընել . Եսկ թէ որ ժողովը գաղտնի ընելն որոշէ , այն ատեն գաղտնի քուէարկութեան եղանակն ի դործ կը դնենք :

Պահ մը չփոթութիւն յանձնելով Երեսփոխանաց մէջ քուէարկութեան յայտնի կամ գաղտնի ըլլալու մասին , Ատենապետ էֆ . այս կէտը քուէի կը դնէ , եւ 24 քուէից դէմ 30 քուէիք կորոշուի գաղտնի քուէարկութիւն ընել :

Արտաւանեան Ս. Փաշայ . — Ընդհանուր ժո-

ղովոց մէջ օրէնք մը կայ զոր կը համարձակիմ յիշեցնել . ամէն ատեն ընտրութիւնները քուէարկութեամբ կ'ըլլան եթէ Յիւլանն իւր կողմէ ցուցակաւ չընէ , եւ քուէարկութիւնը միշտ յայտնի կ'ըլլայ ձեռքը վեր վերցունելով կամ ոտքի վրայ կանգնելով : Բայց եթէ մէկը միայն գաղտնի ըլլալն առաջարկէ , այն ատեն հարկաւ գաղտնի կ'ըլլայ , եւ ասոր համար մեծ մաս փնտրուին աւելորդ է : Քուէի դրուած ատենն ալ չորս առաջարկութեանց ամենէն վերջինն առաջ կ'անցնի եւ առաջինն ամենէն վերջը կը մնայ . երբէք մէկ քանի առաջարկութիւն մէկէն քուէի չդրուիր . ընդհանուր սովորութիւնն այս է . ուստի աւելորդ կը գտնեմ չորս առաջարկութիւն միատեղ Երեսփոխանաց ընդունելութեանը ներկայացնել գրով , եւ անգործադրելի է անոնցմէ ստորագրութեամբ չորսէն մին ընդունելու դրութիւնը :

Փափագեան Ս. էֆ . — Իւրաքանչիւր ոք մէկը միայն պիտի ստորագրէ :

Ատենապետ էֆ . — Ստեփան փաշային զիտողութիւնն ի մասին գաղտնի քուէարկութեան իրաւացի է . ասանկ պարագայի մը մէջ երբ մէկ քանի անձինք քուէարկութեան գաղտնի ըլլալն ուզեն , մեծապէս մաս փնտրելն աւելորդ համարուած է : Ըստ որում այս պարագայն ուրիշ ազգաց մէջ օրինաց կարգ անցած է . իսկ մեք Կանոնադրին մէջ ասոր վրայ յօդուած մը տեսած չըլլալու համար բնականապէս ժողովոյ մեծագոյն մասին զիմել հարկ համարիցի :

Արտաւանեան Ս. Փաշայ . — Մեր Սահմանադրութեան մէջ ալ կայ :

Ատենապետ էֆ . — Շնոր լաւ , թէ որ այդպիսի յօդուած մը գտնաք , ըրած առաջարկութիւնս ետ կ'ունենեմ : (Մէկ քանի Երեսփոխանք յետ փնտրելոյ չեն գտնար այնպիսի յօդուած մը Կանոնադրութեան մէջ) : Նոյնպէս քուէ ուղեւու մասին մեր իբր օրինակ ցուցըցած եղանակն , այսինքն չորս առաջարկութիւնը մէկ թղթի վրայ գատ գատ գրել եւ պարտցնել , եւ իւրաքանչիւր Երեսփոխան իւր ուղած առաջարկութեան տակ այն գրել , եթէ չընդունուիր գատ գատ քուէարկութիւն կ'ընենք :

Պէկեան Թ. էֆ . — Քուէարկութեան ձեւն որոշուեցաւ , գաղտնի պիտի ըլլայ . այս մասին ըսելիք մը չունիմ . բայց չորս առաջարկութիւն մէկէն քուէի դրուելու մասին ամեն որ իրաւունք ունի իւր կարծիքն ըսել , մասնաւոր որ ասանկ մէկ խնդրոյ վրայ քանի մը առաջարկու-

թիւն մէկէն քուէարկելու կնճռալից պարագայ մինչեւ ցարդ պատահած չէր . այս կէտն անհամաձայնութեան նիւթ եղած է արդէն , ոմանք զատ զատ ըլլայ կրօնն եւ ոմանք ամենը մէկէն Ես պիտի ըսեմ թէ զատ զատ ըլլայ , որովհետեւ չորսը մէկանց քուէարկելն անպատեհութիւններ ունի . ցուցնեմ . եթէ ներկայից թիւն ըլլայ 60 եւ ամեն ոք մէյ մէկ առաջարկութեան համար քուէ տայ , քուէները պիտի բաժնուին , եւ վերջապէս երկու առաջարկութիւն ջնջուելով մեծագոյն թիւ վաստակող երկու առաջարկութիւն դարձեալ քուէի պիտի դրուին . այն ատեն ինչ պիտի ընենք . համարենք թէ ես Համ . ժողովոյ համար քուէ տուած էի եւ իմ քուէիս հակառակ արդիւնք ելաւ , հարկաւ պիտի զրկուիմ եւ չպիտի կրնամ այլ եւս քուէ տալ . Անոր համար զատ զատ քուէարկութիւն պէտք է :

Ատենադպիր էՖ . — Որովհետեւ քուէարկութիւնը գաղտնի պիտի ըլլայ եւ ամենը մէկանց քուէարկուելուն մէջ անտեղութիւններ ցոյց տրուեցաւ , ուստի դիւանը զատ զատ կը կարգայ առաջարկութիւնները եւ իւրաքանչիւր ոք այն կամ ոչ ըսելով իւր քուէն կուտայ . եւ բնական է որ մեծագոյն մաս վաստակող առաջարկութիւնը խնդիրը կորոշէ :

Հաւանութեան եւ տհաճութեան խառն ձայներու պատճառաւ խօսից կարգին կանոնաւոր շարունակութիւնը պահ մը կը խանգարի . Ոմանք չհասկնալով դիւանին առաջարկութիւնը , նորէն բացատրութիւն կը պահանջեն :

Ատենապետ էՖ . — Դիւանը կը շուարեցնէք ամենքդ մէկէն խօսելով եւ չէք թողուր որ իր բացատրութիւնը շարունակէ պատահած կնճիորը շուտով բաժնալու համար :

Ալաճաճեան Հ . էՖ . — Կառաջարկեմ որ զատ զատ կամ ամենը մէկանց քուէարկուելն ալ քուէով որոշուի :

Ատենապետ էՖ . — Դիւանն իւր բացատրութիւնը դեռ չըրացուց , եւ կը ցաւիմ ըսել թէ ոմանք առանց կարգի խօսելուն համար ատենական բարեկարգութեան խանգարելուն պատճառ եղան , եւ ժողովին կացութիւնը պահ մը բանակոռուի կերպարանք ստացաւ . կ'աղաչեմ թոյլ տաք Դիւանին որ իւր բացատրութիւնը լրացնէ , եւ այնուհետեւ խօսիլ ուզողները կարգաւ խօսք առնելով խօսին . եթէ յարուցեալ պարագային վրայ համաձայնութիւն չը գոյանայ , Դիւանն ուր ուրեմն պիտի պարտաւորի ժողովին կամացը դիմել :

Ատենադպիր էՖ . — Խնդրոյն վրայ վիճարանութիւն եղած ատեն առանց կրքի ամենայն հանդարտութեամբ , պարտաբեկով , վարուեցանք , հիմա որ քուէարկութեան եկաւ կարգը , պէտք է աւելի հանգարտութեամբ վարուինք , եւ լրջարար խօսինք առանց յուզուելու : Զորս առաջարկութեանց յանգեցաւ խնդիրը , մէկը միայն պիտի ընդունինք քուէարկութեամբ . եթէ յայտնի քուէարկութիւն ըլլաւ , շատ դիւրութեամբ պիտի լմննար . բայց ժողովը գաղտնի ըլլալն որոշեց , ուստի այս վերջին պարագային մէջ գործադրելի եղանակին վրայ պէտք է մտածենք . Դիւանն առաջարկեց որ չորս կէտերը կարգացուելով իւրաքանչիւր ոք մէկին համար իւր հաճութեան քուէն տայ . բայց ասոր դէմ դիտողութիւն եղաւ , քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանալու հաւանականութեան առջեւ անտեղութիւն կը ծագի ըսուեցաւ , իսկ ես կ'ըսեմ . անտեղութիւն մը չկայ , որովհետեւ անձի ընտրութիւն չպիտի ըլլայ . համարենք թէ քուէարկութեան առաջին անգամին իմ ուզածս չբալից . ետքի անգամին մնացածներէն մէկին կը յարմարիմ . այս չպիտի կրնամ ընել միւս եղանակին մէջ : Թէեւ մեր ըսած կերպին մէջ չորս անգամ քուէարկութիւն ընելու անտեղութիւնը կայ , բայց որովհետեւ յայտնի քուէարկութիւն ըլլար նէ այս անտեղութիւնը չպիտի պատահէր եւ որովհետեւ գաղտնի ուզուեցաւ , պէտք է որ ասանկ ըլլայ . եթէ առաջին անգամին բացարձակ առաւելութիւն գոյանայ , միւս երեքը կը ջրուին կը լմննայ :

Ատենապետ էՖ . — Ինչպէս որ արդէն ըսի , շատ անգամ այս տեսակ քուէարկութիւններն եթէ յայտնի ըլլան , ամենէն վերջին առաջարկութիւնն ամենէն առաջ քուէի կը դրուի , իսկ թէ որ գաղտնի ըլլան , առաջնութեան կարգ չի փոխուիր . որովհետեւ գաղտնի քուէարկութեան մէջ ազդեցութիւն չկրնար մտնել եւ ամեն ոք ազատօրէն իր քուէն կուտայ . իսկ քուէարկութիւն ընելու համար առաջարկութիւնները կրնան կամ զատ զատ եւ կամ ամենը մէկէն կարգացուիլ եւ այն կամ ոչ ըսելով անցնիլ :

Արսլանեան Ս . Փաշայ — Ստոյգ է , քանի որ ծածուկ քուէարկութիւն որոշուեցաւ , առաջնութեան կարգ պահելու կարեւորութիւն չը մնաց . քանզի իւրաքանչիւր ոք ազատ է իւր քուէն ուզած առաջարկութեանը տալու . բայց երկու եղանակ ցոյց կը տրուի , մէկը զատ զատ եւ միւսն ամենը մէկէն կարգացուելով այն կամ ոչ գրել ու անցնիլ . վերջին եղանակն անգոր-

ծաղրելի է , որովհետեւ խառնակ բան մը կ'ըլլայ եւ ասանկ համեմատաբար մեծ մաս փնտրուել չըլլար . պէտք է որ մի առ մի առաջարկութիւնները կարգացուին , մէկը լմննալէն ետեւ միւսին անցնուի : Ես թերեւս իմ ուզածս չ'ընդունուիմ ուրիշներէն մէկին կը յարիմ . այս կերպով մինչեւ հիմա եղած լմնացած էր :

Ս . Նախագահ . — Ստեփան Փաշային առաջարկած ձեւին նայելով՝ ըսել կ'ըլլայ թէ չորս անգամ քուէարկութիւն պէտք է ըլլայ . եթէ առաջուց մտածուէր այս , նամակաւ քուէ ուղելու ըլլայինք , ինչ պիտի ընէինք , մէկը միայն պիտի նշանակէինք քուէթղթին մէջ . դարձեալ հոս ալ նոյն եղանակը գործադրել պէտք է . Սրեփոխանաց ամենն ալ դիր գիտեն , թող առաջարկութիւնները գրի առնելով իրենց քուէները տան :

Խօճասարեան Օ . էՖ . — Ժողովէն դուրս եղածն ընտրութեանց համար է միայն . իսկ որ եւ է խնդրոց վրայ կարծիք ուղելու համար ժողովին մէջ կ'ըլլայ քուէարկութիւնը . նամակաւ քուէ ուղելն այս պարագային չ'յարմարիր :

Տ . Ներսէս վարդապետ . — Առաջարկութիւնը թէեւ չորս է , բայց մէկ է ինձի համար , նոյնպէս ամենուս համար , վասնզի մէկին միայն քուէ պիտի տանք :

Ատենապետ էՖ . — Ընդհանուր կանոնը զատ զատ քուէարկելն է , ինչպէս Ս . Փաշան ալ ըսաւ . բայց որովհետեւ դիտողութիւններ կ'ըլլան , Դիւանը տակաւին թոյլ պիտի տայ ձեզ խօսելու եւ եթէ կարելի է համաձայնելու համար :

Խօճասարեան Օ . էՖ . — Ոմանք կ'ըսեն թէ խնդրոյն վրայ մէկ կարծիք ունին , այն կամ ոչ . ասի սխալ է , չորս առաջարկութիւն կայ , երբ մէկին վրայ այն կարծիքն ունին , եւ այն մեր ժուեցաւ , երկրորդաբար միւսին վրայ ալ կարծիք ունին եւ այսպէս շարունակաբար . ըսել է որ չորս կարգի կարեւորութիւն կայ ամենուն համար , մէկին վրայ առաջին աստիճանի կարեւորութիւն , երկրորդին վրայ երկրորդ աստիճանի , եւ այլն , օրինակի համար եթէ ես առաջարկութիւն ներկայացուցած եմ , ինչու չհասկնամ որ ինչ աստիճանի կարեւորութիւն ունեցած է իմ առաջարկութիւնս . ուստի պէտք է որ չորս առաջարկութիւնը ալ զատ զատ քուէի դրուին , Երբ անոնցմէ մէկը բացարձակ առաւելութեան թիւն ստանայ , այն կ'ընդունուի . օրինակի համար եթէ 60 Երեսփոխան կայ , 31 ը մեծագոյն թիւն է :

Ղազարոսեան Ք . էՖ . — Առաջարկութիւնը չորս են , բայց ամենը միօրինակ չեն . մէկն արդէն ժողովն իր քուէովն որոշած եւ ընդունած էր , այսինքն՝ Համագումար ժողովին յանձնելը . նախ ասիկա քուէի դրուի եւ ետ առնուի սուջի որոշումն եթէ ժողովը չպիտի ընդունի . ետքը միւսները :

Ատենապետ էՖ . — Ըսել է որ նախորդ վիճարանութիւններն աղեկ չէք հասկըցած . Խաչատուր Նպիսկոպոս բողոքած է Համ . ժողովոյ վճռոյն դէմ , ուստի նորէն նոյն ժողովոյ յանձնելու կամ չըլլանձնելու խնդիրը վէճի դրուեցաւ . ասոր անհար է ինձ թոյլ տալ :

Փափաղեան Ս . էՖ . — Օգտէն էՖ . ի առաջարկութիւնը ճիշդ մերինին կուգայ կը յանգի . որովհետեւ չորս խնդիր մէկէն քուէի դրուիմէ առաջարկութիւն ընողը կը տեսնէ իրն ինչ աստիճանի կարեւորութիւն ստացած է , նայելով իւրաքանչիւրին վաստակած թիւը . Ես միայն պիտի առաջարկեմ որ չորս կէտերուն առաջնութեան կարգը պահուի . որովհետեւ դիւանը խնդրոց ծաղման կարգը պահած չըլլալով իրենց առաջնութեան կարգաւր չ'ներկայացուց ժողովին :

Ատենադպիր էՖ . — Դիւանը տակաւին կարգ որոշած չէ :

Փափաղեան Ս . էՖ . — Ատենապետ էՖ . քանի անգամ կարգաց արդէն . վարագոյրը պիտի բանամ : (Եուսուֆեան Տ . էՖ . — Խօսք կուզեմ վարագոյրին դէմ բողոքելու համար) : Առաջարկութեանց ծագման կարգը՝ նախ Համագումար ժողովին է . ետքը՝ Խորէն եպիսկոպոսի առաջարկութեան . անկէ ետքը կուգան Խփէքճեան եւ Օգտէն էՖէնտիներուն առաջարկութիւնները : Դիւանին ներկայացուցածն ասանկ է մի :

Ատենապետ էՖ . — Վարագոյրը պիտի բանամ խօսքովն ինչ ըսել կուզէք . արդեօք դիւանին վրայ կասկածնիդ կը յայտնէք :

Փափաղեան Ս . էՖ . — Շատ մեծ տարբերութիւն ունի առաջնութեան կարգը . հիմա թէ որ Դիւանն այս առաջնութեան կարգը քուէի դնէ խնդիրը կը լուծուի :

Ղեկեան Թ . էՖ . — Առաջարկութեանց դասակարգութեանը մասին Դիւանին դէմ եղած դանդախներն անտեղի են . որովհետեւ Դիւանն արդէն ըսած է թէ ինչպէս կուզէք՝ այնպէս ըրէք . Ինձ կը թուի թէ խնդիրն այսչափ կնճռոտելուն պատճառն ուրիշ բան չէ , բայց եթէ կարգ մը երեսփոխաններ միտքերնին

դրած են ( օրինակի համար եւ ) առաջարկու-  
թեանց մէջին քուէ արդ եւ միւս երեքին բնա-  
չտալ . այն եւ ազատ եւ պայտէս բնու-  
իրաւունք չունին ուրիշներուն վրայ քանանալ .  
քանի որ անոնք կրտսն թէ միւս երեք առաջար-  
կութիւններն ալ անարձանաբար կարեն որո-  
թիւն ունին , եւ եթէ մէկը մերժուի , կարելի  
է մնացածներէն մէկուն յարմարիմ , այս նկատ-  
մամբ կուզեն որ առաջարկութիւնները զատ դատ  
քուէի դրուին . որպէս զի եթէ իրենց ուզած  
առաջարկութիւնը ընտրուի , մնացածներէն ի-  
րենց անորժակին յարմար եկածն որն է . եւ  
նոր քուէ տան . կաղաչեմ այս պարագային  
վերջ տալք . այլ եւս յուզելն աւելորդ է .

( Քուէարկութեան եղանակի խնդիրը քուէի  
դնելու ձայներ )

Պէկեան Թ. ԷՖ. — Բայց գիտնալու ենք որ  
այս պարագային մէջ իրաւունքի կէտեր կան ,  
քուէի դնելու հարկ մը չկայ , եւ պէտք է հա-  
մաձայնիք :

Ատենապետ ԷՖ. — Ես կարծի թէ այս կէ-  
տը ընդհանրապէս ընդունուած է եւ քուէի  
դնելու կարտութիւն չկայ . բայց նորէն քուէ  
կուզուի : Խնդիր մը որքան պարզուի այնքան  
ազեկ է , մանաւանդ այսպիսի խնդիր մը , ո-  
րուն վրայ հրահանգ մը չկայ Սահմանադրու-  
թեան մէջ . բայց որովհետեւ վերաքննութեան  
մէջ եմք արգէն . այսպիսի խնդիրները վերա-  
քննիչ Յանձնաժողովոյն յանձնուելով կրնան  
լուծուիլ : կաղաչեմ որ այս պարագաներուն  
մէջ առանց կրից եւ առանց անձնական որ եւ է  
նկատման վիճարանութիւն ըլլայ :

( Նորէն ազմուկ . — քուէ՛ քուէ՛ ) :

Ատենապետ ԷՖ. կը լսեցնէ ձայները , եւ  
Ատենադպիր ԷՖ. խօսք կառնու իրր երեսիտ-  
խան :

Երեսուֆեան Տ. ԷՖ. — Խօսք առի չէ թէ ա-  
ռաջարկութեանց մէջէն որուն որ յարեալ եմ  
զայն պաշտպանելու համար : Ոչ . անձնական  
կարծեաց ծառայել չուզիս ապացուցանելու  
համար քուէ ալ չեմ տար . ըսուեցաւ թէ սկզբ-  
բունքի կէտ մը կայ , որ նոր կը ներկայանայ մե-  
զի . լաւ մտածենք եւ գտնուանել ձամբու մէջ  
չգնենք . ըսուեցաւ նաեւ թէ Դիւանն իւր անձ-  
նական կարծիքն է որ կը պաշտպանէ . ընդհա-  
կառակն փորձով ցուցցինք , երբ Դիւանին ա-  
ռաջարկութեան ղէմ իրաւացի դիտողութիւն  
ըրին՝ ես առինք , եւ Դիւանէն վար իմայ այս  
պահուս , որպէս զի կարենամ ապացուցանել

թէ ի՞նչ արժէք ունի ինչո՞ւրիշ ոչ ոքի Բանու՛ ըս-  
ուած խօսքն . որ գծրագրաբար մէկ քանի ան-  
գամ է որ կը կրկնուի . Բացէք՝ տեսնենք ի՞նչ է  
այդ վարագոյրը : Ամէն մարդ հոս անգատորէն ուզու-  
ծք կըզէ . եւ երբ Ատենապետը Վիճարանութիւն  
կըզէ վիճարանութիւնն օրինաւորութեան մէջ  
մտցնելու եւ խնդրոյն լուծման գործադրելի եւ  
զանակ մը կառավարիչ Դիւանին կողմէ , դա-  
մը նշմարելու գեց ինչո՞ւրիշ ոչ ոքի Բանու՛ ըսող  
պաշտօնակիցս , բայց չը՛ցաւ : Նշո՛ւ համար .  
վասն զի եթէ քանալու ըլլար այդ վարագոյրը ,  
յայտնապէս պիտի տեսնուէր թէ այս խնդրոյս  
վրայ Ատենապետ ԷՖէնտին եւ ես քուղորովին  
անհամաձայն եմք . ինք խնդրոյն Համադուժար  
ժողովին զրկուելու առաջարկութեան յարեալ  
է . ինչպէս որ ձանոյց նախընթաց նստին մէջ .  
իսկ ես Ընդհ. ժողովոյ մէջէն բնուեալ մասնա-  
ժողովոյ մը զրկուիլը կուզեմ , Ո՛ւր կը մնայ հի-  
մայ մեր գաւակցութիւնն առաջարկութեանց  
նախադասութեան մասին . — Քանի որ գաղտնի  
քուէարկութիւն որոշուեցաւ , չորս առաջար-  
կութիւն մէկէն քուէ չենք կրնար դնել . թէ որ  
մէկանց ըլլայ եւ մեծադոյն մաս գոյանայ՝ շատ  
լաւ . բայց հաւանականութիւն կայ որ մեծա-  
գոյն մաս չպիտի գոյանայ եւ համեմատականի  
պիտի մնայ . իսկ համեմատականով չլուծուիլը  
ասանկ խնդիր մը որ չէ թէ կրկու , այլ քա-  
նի մը առաջարկութեանէ բաղկացեալ է . եթէ  
երկու առաջարկութիւն ալ ըլլար , դարձեալ չէ  
թէ երկուքը մէկանց՝ այլ զատ զատ քուէարկել  
պէտք էր : Գալով առաջարկութեանց առաջ-  
նութեան կարգին , գաղտնի քուէարկութեան  
մէջ առաջնութիւն վնտուելն աւելորդ է . իմ  
առաջարկութիւնս թող ամենէն ետքի մնայ ,  
ի՞նչ կըլնէ ասկէց . գիւրագործադրելի եղա-  
նակն որն է նէ այն նայինք . մէկիկ մէկիկ  
կարգանք , մէկը լմնայ , ետքը միւսը . եթէ  
առաջինը մեծադոյն թիւ վաստրկի , միւսներն  
եւս կը մնան :

Իփէկճեան Զ. ԷՖ. — Թէ եւ խնդիրն սմանց  
համար լուսաբանուած կարծուեցաւ , բայց տա-  
կալին կան շատեր՝ որք լաւ չեն հասկցած .  
մէկն ըսաւ թէ երբ չորս առաջարկութիւն մէ-  
կէն քուէի դրուի . իմ քուէս անորն է որուն  
որ համոզուած եմ : Օրինակի համար չուկայ  
գացի պտուղ ստնելու , միտքս դրած էի սալոր  
առնել . բայց սալոր չկայ , տանձ կայ , խնձոր  
կայ . սալոր չգտնելուս համար պարտաւոր չեմ  
անպտուղ մնալ . սոյլ կընտրեմ ուրիշ մը՝ որ քիչ  
շատ ճաշակիս յարմար է : Այսպէս ալ ես առա-

ջարկութիւն մը ըրի դատական մասնաժողով  
կազմելու խնդիրը քննելու եւ տեղեկագիր բե-  
րելու համար . եթէ առաջարկութիւնք ամենը  
մէկէն ներկայանան , տարակոյս չկայ որ իմ  
քուէս իմինիս է . իսկ երբ ուրոյն ուրոյն քուէի  
դրուի եւ իմս մերժուի , անդին երեք առա-  
ջարկութիւն ալ կայ , այն առեն մնացածներէն  
իմ անորժակիս յարմարութիւն ունեցողն որն է  
նէ անոր պիտի տամ իմ քուէս , այսինքն՝ չպի-  
տի ուզեմ էջմիաճնի յանձնուիլը , այլ պիտի ու-  
զեմ Համադուժար ժողովոյ յանձնուիլը : Ուստի  
լաւ կըլլայ որ առաջարկութեանց քուէարկու-  
թեան եղանակը քուէով որոշուի :

( Քուէի դնելու ձայները կը կրկնուին ) :

Ատենապետ ԷՖ. քուէի կը դնէ առաջար-  
կութեանց զատ զատ կամ ամենը մէկէն քուէ-  
արկելու ձեւին խնդիրը , եւ 26 քուէից հակա-  
ռակ 30 քուէով կորոշուի զատ զատ քուէարկել :

Ատենապետ ԷՖ. առաջարկութեանց դա-  
սակարգութեան որոշումն իրեն վերապահելով ,  
եւ ըստ որում Համադուժար ժողովոյ յանձնելու  
կէտն արդէն մէկ անգամ Ընդհանուր ժողովոյն  
մէջ որոշման տակ ինկած ըլլալուն համար բնա-  
կանաբար առաջնութիւն մ'ստացած կը համար-  
ուի , ուստի այս կէտն անմիջապէս քուէի կը  
դնէ եւ երեսփոխանները կը հրաւիրէ ՚ի գաղտ-  
նի քուէարկութիւն :

Քուէարկութիւնը կատարուելով քուէհա-  
մարի քննիչ կընտրուին .

Տ. Ղեւոնդ Վարդ . Փիրղալէմեան	
Միքայէլ ԷՖ. Մամիկոնեան	
Ստեփան » Փափաղեան	
Թադէոս » Պէկեան	
Քուէհամարը հետեւեալ արդիւնքը կուտայ	
Թիւ քուէարկուաց	58
Ոչինչ քուէ	5
Կը մնայ	55
Այ՛ 55 քուէ , եւ « 20 քուէ :	

Հետեւապէս բացարձակ առաւելութեամբ  
քուէից կորոշուի խնդիրը Համադուժար ժողո-  
վոյն յանձնել :

Ատենապետ ԷՖ. կը յայտարարէ թէ քանի  
որ առաջին քուէարկութեամբ բացարձակ ա-  
ռաւելութիւն քուէից գոյացած է , մնացեալ եւ-  
րեք առաջարկութեանց քուէի դրուիլն աւելորդ  
է , վասն զի ամենուն ծանօթ սկզբանց համե-  
մատ՝ մնացեալ առաջարկութեանց եւ ոչ մէկը  
կարելի է այսչափ մեծադոյն թիւ մը վաստրկիլ :

Ժողովոյ հաւանութեամբ մնացեալ երեք  
առաջարկութեանց քուէարկութիւնը ետ թող-  
ուելով , առեանը կը գոցուի ժամ 10 ին .


ԱՏԵՆԱԴՊԻՐ  
ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ  
ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՏԵԱՆ



Faint, illegible text in the upper left section of the page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text in the lower left section of the page.



Main body of faint, illegible text in the center of the page, continuing from the left side.

Diebstahl eines Geldbrieffes  
am 1. März 1844

Verurtheilt zu 6 Monaten Gefängnis

1844

Verurtheilt zu 6 Monaten Gefängnis  
am 1. März 1844

Diebstahl eines Geldbrieffes  
am 1. März 1844

ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ՚ի Գիւ անատան Պատրիարքարանի, և կը գտնուի  
ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկալները :